Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

371.3
K - 93

1 MAR 2010

ՀԱՍԿԵՐԻ
ՄԵԾԱՎԱՐԺԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
IX

ԱԿԱԼԻ, ԱՐՄՏԱԼ.

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Թարգմ. Մ. ԱՄԻԼԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ

371.3
Ա-93
14737
371.3
Ա-93
VII 3 2203 17/VII 28
Ա-3456 7/III 29

13

«ՀԱՅԿԵՐ»-Ի ՄԵՆԿԱՎԵՐԹՈՒՆ ԳՐԵԳԵՐԵՆ

IX

№ 9428
370
1862-ԱՐ
371.3
Ա-93
1003
14737
ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
R.S.F.S.R. Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱՆՍԻԼ. ԱՐՍՏԱԼ.

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Թարգմ. Մ. Ասիլեանց

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշարժ տպ. «Հերմէս» Ս. Պ. Եղիազարեանի, Մաղաթ. փող.
1907

25 FEB 2013

47.914

30428-42

(13113.58)

Ա. Շ Ե Ա Տ Ա Ն. Ք*)

Մանուկների աշխատանքն ընտանիքում

Մինչև վերջին ժամանակները սակաւ ուշադրութիւն են դարձրել մանուկների մասնակցութեան վրա ընտանեկան աշխատանքների մէջ, նոյնպէս և այդ մասնակցութեան նշանակութեան վրա, որ մանկան ֆիզիկական և հոգեկան զարգացման գործում կարևոր դեր է կատարում։

Դպրոցը մեծամեծ պահանջներ դնելով մանկան առաջ, նրան համարեա խլել էր ընտանիքից, հեռացրել նրա շահերից, և երկար ժամանակ այդ բանի վրա նայում էին իբրև մի բնական հանգամանքի, իբր թէ կեանքում առաջին տեղը բռնում է դպրոցը։

Բայց վերջին տարիներս սկսեցին հասկանալ, որ մանկան ուշադրութիւնը կենտրոնացնել միայն դպրոցի վրա՝ արդարացի չէ, թէ մանկան և թէ ընտանիքի նկատմամբ. ուստի մտածեցին սխալը մի կերպ ուղղել։ Մեզ մօտ՝ Նորվեգիայում՝ սկսեցին դպրոցական խոհանոցներ բանալ և ուսման ծրագրի մէջ մտցընել երբեմն-երբեմն առարկաներ՝ տնարարութիւն և «սլոյդ», այսինքն՝ ձեռքի զանազան տեսակ աշխատանքներ, ձեռաբուստ։

*) Այս երկու յօդուածները խմբագրել է Ակսել Աբստալը։

Կասկած չկայ, որ դպրոցական ուսանելի առարկաների շարքում տնարարութիւնն և ձեռարուեստ ժամանակն առաջ կըբերի հետաքրքրութիւն և յարգանք ընդհանրապէս գեղի տնարարութիւնը և տնտեսութիւնը։ Բայց որպէսզի դպրոցում ուսածը ցանկալի հետևանքների հասնի, անհրաժեշտ է որ ընտանիքն ևս նպաստի դրան։ Դպրոցում մանուկներին հաղորդած տեղեկութիւններն ու ձևերը ընտանիքը պիտի կարողանայ գործադրել և շահաւէտ դարձնել, և այդ ճանապարհով ամրապնդի մանուկների ստացած գիտութիւնները և զարգացնի աշխատելու ընդունակութիւնները։

Ընտանիքը կարող է և պարտաւոր է անել այդ, աչքի առաջ ունենալով թէ մանուկների և թէ հէնց իր շահը։ Բոլորովին ճիշտ չէ այն կարծիքը, իբր թէ երեխաներն ընտանիքի մէջ իրենց աշխատանքով զգալի օգուտ չեն կարող բերել, իբր թէ նրանք միայն «խանգարում» և «փչացնում» են. այդպէս են ասում բծախնդիր տանտիկինները։ Երեխաները կարող են տան մէջ շատ օգտաւէտ լինել, միայն պէտք է գիտենալ նրանց աշխատելու ընդունակութիւնները շահաւէտ կերպով գործ դնել։

Մենք աչքի առաջ ունենք, ի հարկէ, աւելի ուսնեոր դասակարգի մանուկներին։ «Հասարակ ժողովրդի երեխան—ինչպէս ասել է գերմանացի մի գրող—քաղաքացի է մի առանձին պետութեան, ուր ամեն ինչ հաստատուած է արդիւնաւորութեան վրա, որտեղ մանուկն էլ իր առանձին տեղն ունի գրաւած, իբրև

աշխատաւոր օգնական իր ծնողների»։

Գործնական ամերիկացիք այստեղ էլ իրատական օրինակ են տալիս մեզ։ Ցանձնելով մանուկներին յարմար տնային աշխատանքներ և զարգացնելով նրանց մէջ պատասխանատուութեան զգացումը, ամերիկացի միջին դասակարգի շատ ընտանիքներ հասել են այնտեղ, որ հնարաւորութիւն ունեն կառավարելու առանց կամ համարեա առանց ծառայի։

Եւրոպացիներիս դժուար հասկանալի է, թէ ինչպէս ամերիկացի մանուկը շատ վաղ սովորում է «օգնել ինքն իրեն» և ուրիշներին։ Ամերիկացի դարձած նորվեգացի մի տիկին, որ մօտ ժամանակներս եկել էր իր հայրենիքը, պատմեց ինձ, թէ ինչպէս երկու տարեկան հասակից իր աղջկան սկսել է սովորեցնել, որ նա իր հագուստներն ինքն կախի ցած խփած կախարանից։ Ամերիկայում ապրող մի ուրիշ նորվեգիացի տիկին գրում է ինձ. «Դու չես կարող հաւատալ, եթէ ասեմ, թէ ինչպէս օգնում է ինձ իմ փոքրիկ Էդգարը»։ Այդ Էդգարն ընդամենը 4 տարեկան էր։

Բոլորն հիանում են ամերիկացիների ինքնավստահ բնաւորութիւնից, առանց ուրիշների օգնութեան ապրելու սովորութիւնից, բայց շատ քչերն են նեղութիւն քաշում մտածելու թէ որտեղից է առաջացել այդ յատկութիւնը։

Ինչպէս յայտնի է, մանուկներն առհասարակ գործ անելու մեծ եռանդ են ցոյց տալիս. «Մայրիկ, բաս ես ի՞նչ անեմ»—յաճախ մանուկների բերանից լսում է այդ հարցը, որ շատ մայրերի յուսահատու-

թեան է հասցնում։ 4 տարեկան Էդգարի մայրը այդ տեսակ մայրերից չէր։ Նա առաջին անգամ տաշեղներ է կրել տալիս խոհանոց, ապա զանազան մանր յանձնարարութիւններով ուղարկում է մօտ տեղերը, պատւիրում է սեղանը գցել, հաւաքել և այլն։ Եւ երեխան բաւական շուտով սովորում է կատարել այդ բոլորը լաւ, ճիշտ և ուշադիր։ Մայրը պարտէզում աշխատելու ժամանակ՝ տղային յանձնարարում է մարդերը քաղհանել, սիսեռ, լոբի տնկել և այլն։ 4 տարեկան մանուկը մօր հսկողութեամբ արդէն կարողանում է լաւ քաղհանել։ Ինքնըստինքեան հասկանալի է որ փոքր երեխաներին բանջարանոցում չէ կարելի շատ դժւար գործեր յանձնել. օրինակ՝ նրանք կը դժւարանան զանազանել ժաղանոսի կամ գազարի բոչբոջներն անպէտք խոտերից. բայց ծաղկանոցում շահպրակի, աստղածաղկի, էլ չենք ասում վարդի մարդերից փոքրիկ երեխաները կարող են անսխալ արմատախիլ անել անպէտք խոտերը։

Երբ կամենում էք երեխաներին որ և է բան սովորեցնել, պիտի լաւ բացատրէք և ցոյց տաք, բայց որ գլխաւորն է՝ պիտի համբերութիւն ունենաք, երեխաներին չըպէտք է յոգնեցնէք աշխատանքով, կամ թէ չըպիտի թոյլ տաք, որ իրենք աշխատանքով յափշտակւեն մինչև յոգնածութիւն։

Մեր երեխաների մէջ, դժբաղդաբար, մեծ մասամբ ինքնօգնութեան շատ փոքր ունակութիւն է նկատւում։ Եւ եթէ միքանի ընտանիքներում պատահում է, որ մատաղահաս աղջիկները որոշ չափով ժանակցում

են առանին և տնտեսական գործերին, ընդհակառակը՝ տղայ-երեխաները՝ թէ մեծ և թէ փոքր կարծես մի առանձին կաստա են կազմում. նրանց ծառայում, խնամում են ծառաները, քոյրերը, մայրերը. և տան մէջ բոլորն էլ այդ համարում են շատ բնական և օրինաւոր բան։

Ամերիկայում այդ բանը չի համարւում ամենաւին բնական և օրինաւոր։ Այնտեղ պատանի պարոնն պարտաւոր է ինքն իր անկողինը հաւաքել, կարգի բերել, իր սենեակի յատակը լւանալ, փոշին սրբել, ամբողջ սենեակը կարգ ու սարքի ձգել, ապա ուսումնարան գնալ։ Իսկապէս որ մի օգտակար մարմնամարզութիւն է առաւօտեան անկողինը հաւաքել, խոզանակին անցկացրած թաց շորով սենեակի յատակի վրա մի քանի անգամ անց ու դարձ անել, և այդ մի դժւար գործ չէ. այդ գործը նոյնքան հեշտութեամբ կարող է կատարել մի պատանի, որքան և մի աղախին, իհարկէ եթէ տղան այդ աշխատանքը մի քանի անգամ կատարել է մօր կամ ծառայի ղեկավարութեամբ։

Թէև Ամերիկայում սենեակների վերքաղելն երեխաների գործն է համարւում, բայց մեր կարծիքով այդ չըպիտի դարձնել մի ընդհանուր կանոն. հարկաւոր է երեխաներին սովորեցնել այդ գործն անել, որպէսզի նրանք կարողանան միշտ, երբ հարկն ստիպի, կառավարւել առանց ուրիշների օգնութեան և բացի դրանից՝ իրրև մարզանք. թող այդ գործը կատարեն կիւրակի օրերը և արձակուրդներին. իսկ լի օրերը, երբ երեխաները շտապում են գնալ ուսումնարան և

նրանց համար ամեն մի բոպէն թանգ է, այն էլ բաւական է, եթէ նրանք իրանց անկողինը ծածկեն, օգանցքը բանան և սենեակում թափթփած իրերը հաւաքեն, կարգի բերեն։

Շատ ընտանիքների առօրեայ կեանքում լինում են արդիսի անհաճոյ օրեր, երբ, ինչպէս ասում են ընտանիքի անդամներից ոմանք, «մարդ կամենում է գլուխ առնել ու տանիցը փախչել»։ Դրանք մեծ լացքի կամ ամբողջ տունը վերքաղելու օրերն են։ Այդպիսի օրերում ծառան կամ աղախինը ծանրաբեռնուած լինելով աւելորդ աշխատանքներով, տանտիկինը պարտաւորուած կատարում է ծառայի կամ աղախնու գործը, իսկ հայրը և երեխաները չեն իմանում՝ ինչ անեն, որտեղ պատսպարուեն։ Այդպիսի օրերն այնքան էլ անհաճոյ չէին լինի, եթէ իմանայինք և կարողանայինք օգտուել տնային գործերում երեխաների օգնութեամբ։ Երեխայի համար սովորաբար այնտեղ է լաւ, ուր մայրիկն է։ Շատ երեխաների համար աւելի հաճելի է մայրիկի հետ խոհանոցումը լինել, քան թէ առանց մայրիկի մանկանոցում կամ հիւրասենեակում։ Իրրև ընդհանուր կանոն պիտի սահմանել, որ այդպիսի օրերում թէ տղայ և թէ աղջիկ երեխաները ոչ միայն իրանք վերքաղեն, կարգ ու սարքի ձգեն իրենց ննջարանները, այլ և սեղանը դցեն ու հաւաքեն, ամանները լուանան և այլն։ Սկզբում այդ գործը թող նրանք անեն մեծ հսկողութեամբ, ապա անկախ՝ իրանց պատասխանատուութեամբ։ Դեռահասները շուտ են սովորում ամանեղէն լուանալ։

Իմ ծանօթ մի զուիցարուհի, քահանայի կին, այն կիրակի օրերը, երբ աղախինն արձակուրդով տանիցը հեռանում էր, ստիպուած ինքն էր պատրաստում ճաշը և անում տնային միւս գործեր. 13 տարեկան տղան առաւօտները օգնում էր մօր։ Մօր գոգնոցը կապած սքանչելի կերպով կատարում էր իւր գործը. նա նոյն իսկ շատ հմտութեամբ կճպում էր գեռնախնձորը, նայում օջախին։ Այդ մասին ահա թէ մի անգամ ինչ պատմեց ինձ պատօրի կինը. «Մինչդեռ ամուսինս եկեղեցում իր ծխականների հետ հոգեշահ զրուցատրութեամբ է զբաղուած լինում, ես էլ նոյն տեսակ զրոյցներով եմ զբաղուած լինում խոհանոցում իմ որդու հետ։ Դուք չէք հաւատայ, եթէ ասեմ, որ այդպիսի կիրակի առաւօտները, երբ ես և որդիս միասին մենակ ենք լինում՝ աւելի ենք մտերմանում միմեանց։ Մինչդեռ խոհանոցում իրրև սրտակից ընկերներ միասին զբաղուած ենք լինում, նա ինքնաբերաբար, անկեղծօրէն սկսում է խօսել այս ինչ և այն ինչ բանի մասին, որոնց մասին ուրիշ ժամանակ ասել-խօսելու առիթ չէր լինի։ Այդպիսով ես ծանօթանում եմ նրա մտածմունքներին, խորհուրդներին և զգացմունքներին, և օգտուում եմ այդ ցուցմունքներից՝ նրա դաստիարակութեան գործն աւելի լաւ տանելու համար»։

Նորվեգիայում ընդունուած և տարածուած դպրոցական խոհանոցները արթնացրին մատաղ կանայի սեռի մէջ մեծ չափով հետաքրքրութիւն և սէր դէպի խոհանոցի գործը և առհասարակ դէպի տնարարութիւնը։ Աղջկանց համար, իսկապէս, այդ յատկութիւնը

ընածին է. այդ պարզ երևում է նրանց խաղերից. նրանց խաղերի և խաղալիքների մէջ մեծ տեղ են բռնում կերակուր պատրաստելը և խոհանոցի վերաբերեալ պարագաները։ Շատ աղջիկ-երեխաների համար տիկնիկից յետոյ ամենալաւ ընծան հնոցն (плита) է։

Տիկնիկի խոհանոցով զբաղուելուց յետոյ արդէն դժուար չէ գործ ունենալ իսկական խոհանոցի հետ, և տանտիկին մայրը հազիւ թէ ստիպուած լինի իր աղջկան երկար բացատրելու դրա կարևորութիւնը։ Խելացի մայրը խոհանոցում միշտ կարող է գտնել և յանձնել, կատարել տալ այնպիսի մանր աշխատանքներ, որոնք նոյնիսկ փոքրահասակների ուժից վեր չեն լինի։ Ի հարկէ, այդտեղ հարկաւոր է համբերութիւն և ներողամտութիւն ունենալ, որովհետև փոքրիկ թաթիկները սկզբում զարմանալի հակամէտ են ամեն բան հակառակն անելու, իսկ փոքրիկ գլխիկները չափազանց ցրուած և մոռացկոտ են։ Բայց ինչ մեծ ուրախութիւն է պատճառում նրանց, երբ որև է կերակուր աջող է դուրս գալիս. օրինակ՝ երբ բիշին մէջտեղից պատռուած չէ, երբ կողիկը խանձուած, սկռած չէ, այլ փափուկ, հաբթ ու լաւ. տապակուած, ինչպէս «մայրիկի պատրաստածն» է։

Բայց կարող են առարկել թէ դպրոց յաճախող աղջիկներն ազատ ժամանակ և յարմարութիւն չունեն խոհանոցի գործերով զբաղուելու։ Ազատ ժամանակ և դէպք կը գտնուեն, միայն թէ մեծերը գիտենան առիթից օգտուել։ Իրաւ է, ճաշը պատրաստում են առաւօտները, երբ երեխաները սովորաբար դպրոցումն

են. բայց չէ՞ որ ճաշից յետոյ և երեկոյեանը տնտեսութեան վերաբերեալ դեռ շատ գործ է մնում անելու։ Բացի դրանից տարուայ մէջ դպրոցական զբաղմունքներից ազատ շատ օրեր կան։ Այդպիսի օրերում, մանաւանդ երբ եղանակը վատ է, խոհանոցի զբաղմունքները հաճելի և օգտակար կը լինեն երեխաներին, փոփոխութիւն մտցնելով նրանց միակերպ, սովորական կեանքի մէջ։

Փորձը ցոյց է տուել, որ այդ ձևով, կարծես խաղ ու պարով, աղջիկները բաւական մեծ առաջադիմութիւն են անում տնարարութեան մէջ, նոյնիսկ առանց դպրոցական խոհանոցների օգնութեան, իսկ երբ դրա վրա աւելանում է և վերջինների օգնութիւնը՝ առաջադիմութիւնն ուղղակի զարմանալի է։ Ով ականատես չի եղել, դժուար թէ հաւատայ։

Ի դէպ առաջ բերենք մի քանի տող տիկին Սելմերի «Գրքոյկ մատաղահաս աղջկանց համար» հեղինակութիւնից։

«Երեկ աղջիկները անտառում, գոմի ետևը, իրանց համար խոհանոց սարքեցին։ Մայրս պատմում է թէ ինչպէս ինքը մի օր դառն լաց է եղել, որ ինքն ամուսնանալուց առաջ կերակուր պատրաստել չէր սովորել, և ահա խօսք տուեց իր աղջկանց առաջուց սորվեցնի, որպէսզի նրանք էլ նոյն վիշտն և ամօթանքը չքաշեն»։

Վատ չի լինի, եթէ դեռահաս տղաներն ևս ժամանակ առ ժամանակ օգնէին խոհանոցում։ Օրինակ՝ նրանք օգտակար կարող են լինել, եթէ մսածեռ մե-

քենայի և պաղպաղակի կաղապարի կոթը պտըտեն, լիցքը կտրատէին և այլն։

Մեզանում շատ քիչ է պատահում, որ դեռահաս տղաները ծառայեն սեղանին։ Սովորաբար, երբ պէտք է լինում երեխաների ծառայութեանը դիմելու, օրինակ՝ մի որևէ բան տալ, կերակուր մատուցանել և այլն, աւելի շուտ դիմում են աղջիկ-երեխաներին. ինչու աւելի շուտ չեն դիմում տղայ-երեխաներին։ Զէ՞ որ նրանք աւելի ուժեղ են, բացի դրանից՝ նրանց հագուստը աւելի յարմար է արագ շարժուելու և աթոռների արանքներով անցուդարձ անելու։ Այդպիսի հանդամանքներում, երբ խօսք է լինում ծառաների մասին, նախապատուութիւնը տրւում է տղամարդ ըստպասաւորներին. ինչու՞ նոյն հայեացքով չառաջնորդւենք և ընտանիքում։

Սեղանին սպասաւորելու համար ես շատ անգամ հրաւիրել եմ իմ եղբօր որդիներին, և համոզւել եմ, որ դեռահաս-տղաները շատ փառաւոր կատարում են այդ գործը։ Երկար տարիների ընթացքում իմ տան ծառան էր միայն մի պառաւ աղախին, որ սովորական օրերում բաւականութիւն էր տալիս մեր բոլոր պահանջներին, բայց երբ հիւրեր էինք ունենում, նա ամեն բանի չէր կարողանում հասնել. լինելով դանդաղաշարժ և ծանր լսող, խեղճը գլուխը բոլորովին կորցնում էր։ Այնուհետև այդպիսի դէպքերում օգնութեան էի կանչում եղբօրս որդուցը. նրանք շատ լաւ կատարում էին աղախնու բոլոր ծառայութիւնները, մանաւանդ որ նրանց տանը սովոր էին այդպիսի ծա-

ռայութիւններ անելու։ Մէկ անգամ տուիթ ունեցայ համոզւելու, որ ուրիշ երկիրներում էլ այդ տեսակ օգնութիւնը համարւում է օրինաւոր և բնական։

Մէկ անգամ մեզ մօտ հիւր էր եկած մի բելգիացի պրոֆեսոր իր կնոջ և երկու որդիների հետ։ Ընթրիքի ժամանակ, երբ իմ եղբօր որդին կիրակուր էր մատուցանում, պրոֆեսորի կինը ասաց. «Mais mon fils sait aussi servir. Maurice, vite à son aide!» *)։

Եւ 12 տարեկան բելգիացին վեր թռաւ աթոռից, ճարպկութեամբ անձեռոցիկն ուսովը ձգեց և սկսեց սպասաւորել մեզ բոլորիս ոչ պակաս լաւ իմ եղբօր որդուց։

Երբ ես Անգլիա էի գնացել, այնտեղ տեսայ մի սովորութիւն, որ կրցանկայի մեզանում մուտ գործէր։ Այնտեղ տապակները՝ բոստրիֆը, խոզի ապխտած ազդրը, հորթի միսը սովորաբար սեղան են բերում չրկտրատած. կտրատում են հացի ժամանակ, և դա տղամարդկանց գործն է համարւում, տանտիրոջ, նրա աւագ որդու կամ թէ նոյնիսկ հիւրի։ Եւ պէտք է ասեմ, կտրատում են ամենայն հմտութեամբ. և ահա թէ ինչու անգլիացի դեռահաս տղաներին սովորեցնում են այդ արուեստը, նրան վոտոխակի նստեցնելով տանտիրոջ կամ տանտիկնոջ կողքին, որոնք նրան սովորեցնում են տապակներ կտրատելու ձևը և կանոնը։ Շատ լաւ կը լինէր, եթէ մեզանում էլ դեռահաս տղա-

*) Իմ որդին նոյնպէս գիտի սպասաւորել սեղանին, Մորիս, շուտ, օգնիր նրան։

ТИФЛИСКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

ներին սովորեցնէին նոյնը։ Նրանք ընտանիքի հայրեր դառնալով, ժամանակով չեն թոյլ տալ կանանց կատարել այնպիսի մի գործ, որ աւելի յարմար է տղամարդու ուժեղ ձեռքերին։ Սուր ու մեծ դանակը բոլորովին կանացի ձեռքի գործիք չէ։

Միջին դասակարգի ընտանիքի առօրեայ կեանքի մէջ դեռ շատ աշխատանքներ կը գտնուեն, որ կարող են կատարել աւելի հասակաւոր տղաները, օրինակ՝ ածուխ կամ քարածուխ բերել վառարանի համար, կը պչանի համար տաշեղ ճղճղել և այլն։ Եւ իրաւ, ինչու այդ տեսակ աշխատանքը չը կատարի ուժեղ, գիրացած պատանին, մինչդեռ աղքատ ընտանիքներում նոյն աշխատանքը կատարում են նրանից աւելի փոքրահասակ տղաները։ Այդ տեսակ ֆիզիքական մարզանքը նախ կը մտցնի փոփոխութիւն մեր դպրոցական երեխաների նստակեաց կեանքի մէջ և երկրորդ՝ կը զարգացնի մեր երեխաների մէջ այն գիտակցութիւնը, թէ՝ ընտանիքում ամեն մի անդամ ունի ոչ թէ միայն իրաւունքներ և արտօնութիւններ, այլև պարտաւորութիւններ։ Բացի դրանից տնային աշխատանքներն ունեն և այն առաւելութիւնը, որ երեխաներին կապում են տան և ընտանիքի հետ։ Մեզանում առհասարակ ծնողներն և երեխաները սակաւ են միասին լինում, կարծես նրանց շահերը տարբեր լինեն։ Տնային գործերում ծնողներին օգնելը, նրանց աշխատանքներին և հոգսերին մասնակցելն ամրապնդում է ընտանիքի ընդհանուր կապը։ Երեխաներին ընտանիքի աշխատանքներին մասնակից անելը լաւ հակամիջոց է նրանց եսասիրութեան ա-

ռաջն առնելու, որի ամենազգալի արտայայտութիւններից մէկն է նրանց չափազանց պահանջկոտութիւնը թէ դէպի իրանց ծնողները և թէ դէպի ծառաները։ Երեխայի համար օգտակար է, որ նա իր հասակին և զարգացմանը համեմատ՝ հետզհետէ ծանօթանայ այն դժուարութիւններին, որոնց դէմ ծնողները իրանց ամենօրեայ ընտանեկան կեանքում կռիւ են վարում։ Բարոյապէս անարատ մանկան մէջ այդ գիտակցութիւնը կառաջացնի բնական պահանջ՝ օգնել ծնողներին, իր վրա ևս վերցնելով մի մասն այն ծանրութեան, որն ընկած է հօր կամ մօր վրա։

Երեխաների մասնակցութիւնն տնային աշխատանքներին ունի և այն առաւելութիւնը, որ զարգացնում է նրանց մէջ աչքաբացութիւն, ճարպիկութիւն և նախապատրաստում է ապագայ գործնական կեանքի։ Հաւանականութեամբ կարելի է ասել, որ հասարակութեան համար օգտակար դարձած շատ անձնաւորութիւնների գործունէութեան սկիզբը դրուել է հէնց ընտանեկան օջախից, անյայտ վաստակաւոր մօր հոգացողութեամբ։ Եւ ով գիտի, թէ յաճախ մանկան հոգու մէջ ապագայ գործունէութեան ինչպիսի օգտակար սերմեր է ձգում որ և է սրբագրութեան ընթերցումը, յօդուածի արտագրութիւնը կամ գրքի մէջ հօր համար կարևոր տեղեկութիւններ որոնելը։

Խօսք ձգելով սրբագրութիւնների, արտագրութեան և այլն մասին, ես արդէն ընդլայնում եմ մանուկների ընտանեկան աշխատանքներում մասնակցութեան շրջանը։ Բայց ես փորձով գիտեմ, որ այդ տե-

սակ աշխատանքներն էլ զգալի օգուտ են բերում մանուկներին։ Մեր ընտանիքում չկար այնպիսի մի գործ, որին մեզ՝ երեխաներիս՝ մասնակից չանէին։ Բոլոր այդ մանր հոգսերն ու աշխատանքներն ոչ միայն մեզ հաճոյք էին պատճառում, այլ և նպաստում էին մեր մտաւոր զարգացմանը։ Եւ այդ պէտք է վերագրել մեր մօրը։ Նա գիտէր զարմանալի հմտութեամբ ամեն մի չնչին գործ գրաւիչ դարձնել։ Մինչև անգամ մեր մշտական մուշտարիներին կաթ վաճառելը մեզ համար մի առանձին հաճոյք էր (իմ մանկութեան ժամանակ, 50-ական թուականներին, մեզանում փոքրիկ քաղաքներում միջին կարողութեան տէր մարդիկ կով էին պահում, թէ իրանց առօրեայ պիտոյքների համար և թէ իբրև մի լրացուցիչ եկամուտ)։ Եւ որքան օգտակար դասեր էր տալիս մեզ մեր մայրը տնային զանազան աշխատանքներ կատարելու միջոցին. «լաւ նայիր, փրփուրը հեռացրու և չափը ուղիղ բռնիր», կամ «չափը միշտ լիքը լից և, եթէ կարող ես, մի աւելորդ կաթիլ կաթ էլ աւելացրու և այլն»։

Ահա այդ տեսակ նիւթերից ըստ մեծի մասին կառուցւում է մանուկների բարոյական շէնքը. այդպիսի չոշափելի օրինակներով բարոյականութեան պատուէրներն աւելի շուտ են տեղաւորւում գիտակցութեան մէջ։ Այն, ինչ որ մեզ սրբազան պատմութեան դասերի ժամանակ ուսուցանում էին, օրինակ փրկչի այն խօսքերը թէ «ինչ չափով չափէք, այն չափով էլ կը չափեն

ՀԱՅ ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Դ.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
Հ. ՄԱՏՍՈՒՆԻ ՄԱՏՍՈՒՆԻՑԻ ԱՆՎԱՆ
(1003) 13113-08

ձեզ», գործնական բացատրութիւններ պատանում մեր տագարակում։

Այդումը նոյնպէս մեզ յանձնում էին կատարելու զանազան աշխատանքներ։—Փորում էինք, հողը կրում, քաղում ժողովում մրգեր, պտուղներ և այլն։ Այն ծնողներին, որոնք մի կտոր հող ունեն այգի ձգելու կամ բանջարանոց դարձնելու, խորհուրդ եմ տալիս անպատճառ երեխաներին մասնակից անել այդ աշխատանքներին։ Շարժողութիւնն և աշխատանքն ազատ օդում ամրացնում է մարմինը, իսկ ընութեան հետ շփումը՝ զարգացնում և ազնուացնում է հոգին։

Ես հաւատացած եմ, որ ընթերցողներից ոմանք կառարկեն. «Այո, առաջ, հնումը, ուրիշ բան էր. այն ժամանակներում աւելի յարմարութիւններ և առիթներ կային երեխաներին մասնակից անելու աշխատանքներին»։ Իսկ ես դարձեալ կրկնում եմ՝ դէպքեր և առիթներ միշտ կը գտնուեն, միայն թէ ցանկութիւն լինի նրանցից օգտուելու։ Եւ մեզանում այժմ կան այն տեսակ ընտանիքներ, որտեղ ծնողները հետևում են այն խելացի սկզբունքին թէ երեխաները կարող են և պարտաւոր են մասնակցել ընտանեկան աշխատանքներին։

Ես ճանաչում եմ մի կրթուած մարդու, որ ստանալով միայն [illegible],400 կրոն (մոտ 1250 ր.) տարեկան ռոճիկ, նոյնպէս ձրի բնակարան, վառելիք և լուսաւորութիւն, կարողանում էր իր կնոջով և 7 որդիներով անկարօտ և վայելուչ ապրել, և այդ շնորհիւ այն բանի, որ նրա երեխաներն ընդարձակ մասնակցութիւն

ունէին տնային ընդհանուր աշխատանքներին։ Երեխաներն ստանում էին լաւ սնունդ, իրանց հասարակական դիրքին յարմար կրթութիւն և հագնւում էին վայելուչ. երբ նրանք փոքր ինչ հասակ առան, բոլորն էլ իրանց ուժերի համաձայն մասնակցում էին ընտանեկան աշխատանքներին, և որովհետև վիջոց չունէին որ և է օտար մարդու ծառայութիւնը վարձատրելու, ուստի իրանք էին կատարում ընտանեկան բոլոր աշխատանքները։ Տղայ երեխաները փայտ էի ճղում, ածուխ տանում խոհանոցը, հագուստները մաքրում, կօշիկները սրբում, զանազան յանձնարարութիւններ կատարում, տան համար առուտուր անում. աղջիկները սենեակներն էին մաքրում-վերքաղում, մօրն օգնում կերակուր եփելու, ճերմակեղէնը և հագուստները կարկատելու, եղբայրների հետ նոյնպէս աշխատում էին այգում և բանջարանոցում. այս վերջիններները հետզհետէ զարձան եկամտի աղբիւր։ Զնայելով որ այդ գործերը քիչ ժամանակ ու աշխատանք չէին պահանջում, այնուամենայնիւ երեխաներից ոմանք ստացան բարձրագոյն կրթութիւն։ Ծնողներն ինչ նպատակ որ դրել էին իրանց որդոց կրթութեան համար, բոլորն էլ հասան այդ նպատակին, բոլորն էլ հասարակութեան օգտակար անդամներ են դառած և ապրում են իրանց անձնական աշխատանքով։

Ես հանդիպում եմ և հարուստ ընտանիքներ, որոնք իրանց որդոցը մանկիից են անում ընտանեկան աշխատանքներին. այստեղ տնտեսական հաշիւը դեր չի խաղում, այլ այն, որ իրանց որդիքը մատաղ հասակից

ընտելանան աշխատանքի, սիրեն և գնահատեն նրան։ Իմ ծանօթ մի հարուստ վաճառականի ընտանիքում մեծ երեխաները՝ իրանց զանազան ընդունակութիւնների համաձայն՝ օգնում են իրանց փոքր քոյրերին և եղբայրներին. օրինակ՝ դեռահաս-աղջիկներից մէկն իր ճարտար մատիկներով և նուրբ ճաշակով նորոգում և զարդարում է փոքր քոյրերի գլխարկները, իւրաքանչիւր հասարակ գլխարկի համար մօրից ստանալով 20 էրէ (մօտ 10 կոպ.), իսկ ճոխ զարդարանքով գլխարկի համար 25 էրէ (12 կոպ.)։ Ընտանիքի «երաժշտագէտ» անդամներից մէկը իր փոքր եղբայրներին և քոյրերին դաշնամուրի վրա նուագել է սովորեցնում։ Մէկ աղջիկն էլ լայտնի է իր խոհարարական տաղանդով. սա էլ իր արւեստը գործադրում է խոհանոցում։ Այդ ընտանիքի մէջ կայ և մանկավարժութեան տաղանդի ներկայացուցիչ. սա էլ կռիւ է մղում վատ թւանշանների դէմ, որպէսզի նրանք չլայտնուեն փոքր քոյրերի և եղբայրների յիշատակարաններում։

Դեռ էլի ինչով օգտակար կարող են լինել մանուկները ընտանիքում։—Տղայ երեխաները կարող են կատարել այնպիսի մանր աշխատանքներ, որոնց համար հրաւիրում ենք հիւսն և պատատագործ։ Երեխաները սաստիկ սիրում են գործ ունենալ մուրճի, մեխերի, բուրղուի, ռանդայի և այլ գործիքների հետ. եթէ նրանք ունենան մի արկղ ամենաանհրաժեշտ գործիքներով և սոսինձ եփ տալու աման, և եթէ դրանց վրա աւելանայ մասամբ և հօր օգնութիւնը, երեխաները կարող են ընտանեկան տնտեսութեանը բաւական

չափով նպաստել։ Իրաւ է, ներկայ կրթուած միջին դասակարգի հայրերը թէև վատ արհեստաւորներ են, բայց և այնպէս, եթէ նրանք գործին միացնեն իրանց խելքը, իսկ որդիքը՝ իրենց ձեռքերը, կըստացուի մի օգտաւէտ գործ, որ և կուրախացնի երեխաների մօրը։

Հարկաւոր է նրան խրախուսել երեխաների հակումը սղոցելու և փայտի վրա փորագրելու։ Այդ տեսակ զբաղմունքները զարգացնում են ճաշակ, արուեստի ոճերի հասկացողութիւն և մատների ճարտարութիւն, իսկ աշխատութիւնները կըծառայեն իբրև տան զարդարանք [1])։

Վատ չէ, եթէ տղաներն էլ սովորեն և ասեղ գործածել, որպէսզի եթէ «հարկաւոր» կոճակը կամ ճարմանդը կորչի, կամ թէ հանդերձի որևէ անյարմար տեղը պատռուի, երբ նրանց մօտ ոչ մայր, ոչ քոյր և ոչ մի ուրիշ կին կըլինի, շտապած չըլինան, կարողանան իրենք իրենց գլխի ճարը տեսնեն։ Երբ իշխան Օսկարը (այն ժամանակ Շուէդիայի թագաժառանգը) իր կադէտ (աշակերտ) եղած ժամանակ առաջին անգամ նաւով հեռաւոր ծովագնացութեան պիտի գնար, թագուհի մայրը խնդրեց իր պալատի հանդերձապետ կանանցից մէկին՝ սովորեցնել իշխանին ասեղ գործածել, և իշխանը կարել ու կարկատել սովորեց։ Ծովագնացութեան ժամանակ իր հանդերձները ինքն էր կարկատում ու կարգի բերում։ Եւ ահա այն բանը, ինչի մասին պարտք համարեց հոգալ թագուհին, հոգալու պարտաւոր են և միւս մայրերը։

Մանուկների մասնակցութիւնը ընտանիքի տնային աշխատանքներին ունի ոչ միայն անձնական, առողջապահական, բարոյագիտական, մանկավարժական նշանակութիւն, այլև հասարակական։ Ներկայ ժամանակի հասարակական խնդիրների շարքում առաջին տեղն է գրաւում մի խնդիր էլ, այն է՝ վերջնականապէս հարթել այն անդունդը, որ կայ հասարակութեան տարբեր դասակարգերի մէջ։ Մտքի աշխատանքի ներկայացուցիչները և ֆիզիքական աշխատանքի ներկայացուցիչները արդէն իրանց չեն համարում երկու թշնամի բանակ։ «Աշխատանքի ազնուութեան» մասին յաճախ կրկնուած խօսքը արդէն պատրաստ է նրանց մէջ միութեան կամուրջ ձգելու։ Այժմ մարդուն այլևս չեն հարցնում՝ ի՞նչ է անում, այլ թէ ի՞նչպէս է անում իր գործը։ Իր գործը սիրող և հմուտ արհեստաւորն այժմ նոյնքան կարող է վատահ լինել, որ իր աշխատանքը յարգուի, որքան հետախոյզ գիտնականը։

Այդ պատճառով հարկաւոր է մատաղ հասակից ներշնչել երեխային յարգանք դէպի տնային աշխատանքը։ Այդ բանի համար ամենագործնական միջոցն է մանկան մասնակից անելը առտնին աշխատանքներին։ Հնացած այն հայեացքը՝ թէ ֆիզիքական աշխատանքը մի ստոր գործ է, թէ չարժէ որ «զարգացած» մարդիկ

[1]) Սղոցելու դէմ (ինչպէս և ճախարակային աշխատանքների դէմ) կարելի է մի առարկութիւն անել՝ սղոցածքի փոշին մասամբ վնասակար է թոքերի համար։ Թոյլ կուրծք ունեցողները դրանից սկսում են հազալ։

ուժ և ժամանակ գործ դնեն դրա վրա, չի յարմարուում մեր ժամանակի հասկացողութեանը և աւելի չի յարմարուի ապագայում. ուստի անհրաժեշտ է ներշնչել մանկան—ապագայ տղամարդուն կամ կնոջը—ոչ միայն յարգանք, այլև սէր դէպի ֆիզիքական աշխատանքը։ Դրանով առաջն առած կըլինենք շատ անարդարութեան, վշտի և դասակարգային ատելութեան։

Եթէ երեխային վիճակուած է ապագայում իր հացը ճարել ֆիզիքական աշխատանքով, վատ չէ որ նա առաջուց հէնց ընտելանայ դրան. իսկ եթէ նրան վիճակուած է ուրիշ ասպարէզ, աւելի լաւ, թող նա մանկութեան հասակից հասկացողութիւն ունենայ, թէ ֆիզիքական աշխատանքի համար որքան ուժ և ջանք է հարկաւոր։ Օրինակ՝ այն տանտիկինը, որ երեխայութեան և օրիորդութեան ժամանակ ինքն է կատարել այն աշխատանքները, որը՝ այժմ ինքն լինելով տիրուհի և ընտանիքի մայր, կատարում է աղախինը, անհամեմատ լաւ կըհասկանայ և կըգնահատի վերջինիս աշխատանքը, քան թէ ապարանքներում իր կեանքն անցկացրած օրիորդը, որն ամենևին ձեռքն աւել չի առել և փոշի չի մաքրել։

Ծնողներ, սովորեցրէք և ընտելացրէք ձեր երեխաներին ֆիզիքական աշխատանքի և օգնեցէք նրանց սիրելու այն։ Դրանով դուք նրանց ժարմինը կըզօրացնէք, հոգին կազնուացնէք, աւելի ժարդասէր, գործնական և անկախ կը դարձնէք. նրանք աւելի ապահովուած կըլինեն «գժբախտ դիպուածներից, անսպասելի հանգամանքներից», որոնք շատերին արգելք են լինում ձեռք

բերելու զարուխտ-դուշը—բախտը. առհասարակ նրան բռնելը դժուար է, բայց աւելի դժուար է նրան պահել, ձեռքից չըթողնել։

Տիկ. Վ. ուլՖսբիերզ

Նորվեգիացի հեղինակ տիկնոջ յօդուածին կարող է ծառայել իբրև մի գեղեցիկ յաւելուած կոմս Լ. Ն. Տոլստոյի նամակը՝ գրած իր մերձաւոր ազգական մի տիկնոջ։ «Ես, գրում է Լ. Ն. Տոլստոյը, շատ ուրախ եմ, որ լուրջ խօսակցութիւն ունեցայ Ի-ի հետ (նամակագիր տիկնոջ ամուսինն է) երեխայոցդ դաստիարակութեան մասին։ Ես նրա հետ համաձայն եմ, միայն բացասական մտքով։ Մենք երկուսս էլ ընդունում ենք, թէ որքան հնարաւոր է, պէտք է երեխաներին քիչ ուսուցանելը։ Եթէ երեխաները մեծանան և սակաւ առարկաներ գիտենան, այդ դեռ այնքան էլ վատ բան չէ, քան թէ այն ինչոր տեսնում ենք երեխաների մէջ, մանաւանդ այն երեխաների, որոնց դաստիարակում են մայրերը. մայրերն իրենք էլ շատ անգամ չեն իմանում այն առարկաները, որ սովորեցնում են երեխաներին. երեխաները թոյլ են սովորում և սկսում են ատել ուսումը։ Երեխաները կամ թէ հասակաւոր մարդը կարող են սովորել միայն այն ժամանակ, երբ սիրում են աւանդած առարկան։ Առանց այդ սիրոյ ուսումը չարիք է, սոսկալի չարիք, որ վերջ ի վերջոյ մարդուն բթամտութեան է հասցնում։ Հաւատացնում եմ ձեզ, ես այս մասին չէի գրի, եթէ այս բոլորն առագին կարևորութիւն չունենար։ Ամենից առաջ հա-

ւատ ընծայեցէք ձեր ամուսնուն. նա այս խնդրի մասին շատ խելացի հայեացք ունի։ Սովորաբար առարկում են՝ եթէ երեխաները առարկաներ չը սովորեն, հապա ինչով զբաղուեն։ Մինթէ նրանք ստիպուած պիտի լինեն գիւղացի երեխաների հետ արթուրմա խաղալու և զանազան անկարգութիւններ ու չարութիւններ անելու։ Աչքի առաջ ունենալով մեր ազգային կեանքը, այդ առարկութիւնը, ի հարկէ ունի իր հիմքը։ Բայց մինթէ անհրաժեշտ է երեխաներին ընտելացնել ազգային կեանքի և նրանց զգացնել տալ, թէ նրանց բոլոր պահանջները պիտի կատարուեն առանց նրանց մասնակցութեանը աշխատանքի մէջ։ Ես կարծում եմ, որ լաւ դաստիարակութեան առաջին պայմանն է, որ երեխաները հասկանան թէ այն ամենը, ինչ որ իրենց կարիքների համար անհրաժեշտ է, պատրաստ չի ընկնում երկնքից, այլ ձեռք է բերւում ուրիշ մարդկանց աշխատանքով, մարդկանց, որոնք նրանց չեն ճանաչում և չեն սիրում. բայց երեխայի համար դժւար է հասկանալ այս (երանի հասկանայ նա այն ժամանակ, երբ կը մեծանայ)։ բայց նա կարող է և պարտաւոր է հասկանալ, որ ազախինը կամ դայեակը առանց որ և է հաճոյքի է լւանում նրա կեղտոտած ամանեղէնները, սրբում նրա կօշիկները և կրկնակօշիկները, որ նա միշտ մաքուր, կոկւած հագնում է։ Նա պարտաւոր է հասկանալ, որ ազախինն այդ անում է ոչ թէ նրան սիրելով, այլ ուրիշ, նրան անյայտ պատճառներից ստիպւած։ Եթէ երեխան իմանալով այդ, չի ամաչի, նշանակում է՝ նրա դաստիարակութեան սկիզբը շատ վատ

ճանապարհով է գնում և պիտի թողնի նրա ամբողջ կեանքի վրա խորին հետքեր։ Խուսափել այդ բանից շատ հեշտ է, և ես, որ մօտեցել եմ գերեզմանի ափին (խօսելով բանաստեղծական ոճով), խնդրում եմ ձեզ՝ թող երեխաներն իրենց բոլոր գործերն իրենք անեն. թող իրենք ժաքրեն, վերքաղեն իրենց սենեակները, սրբեն իրենց կօշիկները, թող իրենք ջրով լցնեն իրենց լւացարանը, թող իրենք ձգեն իրենց սեղանը և այլն։ Այդ ամենը թէև թւում են չնչին, բայց հաւատացէք, որ դրանք աւելի կարևոր են ձեր որդոց բախտաւորութեան համար, քան թէ ֆրանսերէն լեզի, պատմութեան և այլն գիտութիւնը։ Իրաւ է, այստեղ մի գլխաւոր դժւարութիւն է առաջ գալիս։ Երեխաները սիրով անում են այն, ինչ որ անում են նրանց ծնողները։ Եւ ահա թէ ինչու խնդրում եմ ձեզ, այդ բոլորը ձեզ համար դուք ինքներդ արէք։ Հէնց առաջին ամսից ինքներդ բաւականութիւն կըզգաք, իսկ երեխաներն էլ առաւել բաւական կըլինեն։ Եթէ այդ բոլորի վրա կաւելացնէք աշխատանքները դաշտում և բանջարանոցում, աւելի լաւ կը լինի, թէև այս վերջին տեսակ աշխատանքը յաճախ թւում է միայն հասարակ ժամանց։ Իր սեփական պահանջների մասին անձամբ հոգ տանելը, սեփական աղտոտութիւնները դուրս տանելը՝ ամենալաւ կրթարաններն են։ Հաւատացնում եմ ձեզ, առանց այդ պայմանի չըկայ բարոյական դաստիարակութիւն կամ գիտակցութիւն, թէ բոլոր մարդիկ եղբայրներ են և միմեանց հաւասար։ Երեխաների համար դեռ ևս հասկանալի է, թէ չափա-

հաս մարդը, սեղանաւորը կամ ճախարակագործը, նը-
կարիչը կամ վերակացուն, որը կերակրում է մի ամ-
բողջ ընտանիք, պիտի ազատուի այն զբաղմունք-
ներից, որոնք խանգարում են նրան իր ամբողջ
ժամանակը նուիրելու ընտանիքը կերակրող աշխա-
տանքին։ Բայց երեխաներն ինչպէս կարող են բա-
ցատրել, թէ ինչու ուրիշներն նրանց համար ա-
նում են այն, ինչ որ նրանք իրենք կարող էին անել։
Դրա միակ բացատրութիւնը կարող է լինել .այն,
թէ մարդիկ բաժանւում են երկու դասակարգի, պա-
րոններ և ստրուկներ։ Որքան կամենաս ճառիր մարդոց
եղբայրութեան և հաւասարութեան մասին,
երեխաները չեն հաւատայ, քանի որ իրենց կեանքի բոլոր պայ-
մանները, արթնանալու րոպէից մինչև անկողին մտ-
նելը, հակառակն են ապացուցանում։ Երեխան հաւատ չի
ընծայում ծերունիների խօսքերին, երբ նրանք խո-
սում են բարոյականութեան մասին. նա իր հոգու
խորքում զգում է, որ այդ բոլոր ճառերը սուտ են.
նա դադարում է հաւատալ իր ծնողների, ուսուցիչ-
ների խօսքերին և վերջի վերջոյ անհրաժեշտութիւն
չի համարում որևէ բարոյականութիւն։ Մի նկատողու-
թիւն էլ։

Եթէ անկարելի է անել .այն ամէն, ինչի մասին
այժմ խօսեցի, թող երեխաները գէթ դրւին այնպիսի
անյարմար պայմանների մէջ, որ զգան, թէ իրենց
դրութիւնը վատ է հէնց այն պատճառով, որ իրենք չա-
րին այն, ինչ որ պարտաւոր էին անելու։ Օրինակ՝
եթէ հագուստները և կօշիկները մաքուր չեն, ուրեմն

տանից դուրս գալ չի կարելի. եթէ ջուրը բերուած չէ
և ամանը չի լուացուած, խմելու բան էլ չի լինի։ Բոլորից
կարևորն է՝ չըվախենաք ծաղրի առարկայ լինելուց։
Վատ վարմունքների ինը տասնորդականն առաջա-
նում է հէնց նրանից, որ մարդիկ վախենում են ծաղրի
առարկայ դառնալուց. եթէ հակառակը արեցին։

Ծերոի աշխատանք

—

1879 թ-ի ամառը ճանապարհորդում էի Զուի-
ցերիայում և ճանապարհին, Ինտերլակենի և Լաու-
տերբրունենի մէջտեղը, պատահմամբ մտայ մի փոք-
րիկ խանութ, ուր մի գէր, առողջ գիւղացի վաճառում
էր զանազան սիրուն մանր իրեր։

—Օ՜հ, որքան գեղեցիկ իրեր ունէք,—ասացի ես։

—Իրրև յիշատակ գնեցէք մի բան։

—Լաւ։ Բայց ասացէք, խնդրեմ, ո՞րտեղից էք գը-
նել այս իրերը, Պարիզի՞ց։

—Հա՜, հա՜։ Ոչ, այս բոլորը շինել են իմ վեց
զաւակները ձմեռայ ընթացքում։

—Մի՞թէ։ Բայց ինչ նիւթից են պատրաստել։
Սա կարծեմ, փայտից է, սա էլ ապակուց, իսկ սա
մետաղից, միւսը...

—Բարից, ոսկորից, եղջիւրից,— խօսքս կտրեց գիւ-

զացին, ցոյց տալով այդ նիւթերից պատրաստած իրերը։

Ես գնեցի բաւական իրեր։ Յիշում եմ, նրանց մէջ էին և ծալովի առաջնափորիչ և ականջաքորիչ, որոնք ծալուելով դառնում էին զանազան սրամիտ կերպարանքներ—օրինակ՝ աղօթք անող կրօնաւոր և այլն։ Տանը, ում ցոյց էի տալիս, բոլորն էլ հիանում էին։

Զուիցերիայում այդպիսակ փոքր խանութների թիւը բաւական շատ է։ Այնտեղ ազգաբնակութիւնն աւելի խիտ է քան թէ մեզ մօտ, Նորվեգիայում. բայց այնտեղ հողն աւելի պտղաբեր չէ, բացի դրանից, այնտեղ չըկան անտառներ, ծովեր և այնպիսի գետեր, որոնք կերակրում են Նորվեգիացիներին, և ահա այնտեղի ժողովուրդը իր պէտքերը լրացնում է տնային արհեստներով կամ տնայնագործութեամբ։ Այնտեղ այդ տեսակ աշխատանքը մինչև այսօր չի նուազել և չի կորցրել իր նշանակութիւնը, թէև արդէն սաստիկ զարգացել է գործարանական արդիւնաբերութիւնը և այժմ Զուիցերիան իր արտադրութիւններն ուղարկում է աշխարհի ամեն կողմերը։

Իսկ ինչ դրութեան մէջ է այդ գործը մեզ մօտ. ինչ դեր է կատարում տնային աշխատանքը մեր ընտանիքներում։

Մեր երկիրը, մանաւանդ վերջին յիսուն տարուայ ընթացքում, հետզհետէ աւելի մեծ չափերով է մասնակցում ազգերի համաշխարհային մրցութեանը, թէ գործարանական արդիւնաբերութեան, թէ հաղորդակցութեան միջոցների և թէ արտաքին առևտրի վերա-

բերմամբ։ Այդ կողմից մեր ջանքերն եղել են արդիւնաւէտ—շատացել է երկրի եկամուտը, ժողովուրդն առաջադիմել է գիտութիւնների մէջ, ձեռք է բերել գործնական ընդունակութիւններ և հմտութիւն։ Մինչև անգամ վայելքների այն պահանջը, որ այդ ընդհանուր առաջադիմութիւնից հետզհետէ աճում է ժողովրդի մէջ, ունի իր լուսաւոր կողմերը։ Շատ տեղերում կիսաքաղց ապրուստին փոխարինել է աւելի բարեկեցիկ կենցաղավարութիւն։ Միայն ափսոս, որ պահանջներն աւելի արագ են աճել, քան թէ այդ պահանջներին բաւարարութիւն տուող ընդունակութիւններն ու հմտութիւնը։

Երկրի արդիւնաբերութիւնը աճելով, հետզհետէ արհամարհանքի է ժառնուել և իր անկմանը մօտեցել նրա ամենակարևոր մի ճիւղը, տնայնագործութիւնը։

Գործարանական խոշոր արդիւնաբերութեան հրաշալի զարգացումը յանկարծակի բերեց, շշմեցրեց մանր տնայնագործին. նա յուսահատուած իրեն անգործութեան մատնեց։ Գործարանների արդիւնաբերած առարկաների աժանութիւնն անշահաւէտ և անկարևոր դարձրին ձեռքի արտադրութիւնը թէ սեփական կարիքների և թէ վաճառքի համար։

Միայն մի հանգամանք աչքաթող է արուում, այդ այն է, որ ամենից անշահաւէտը ոչինչ չանելն է. մոռացութեան է տրուում, որ գործարանի մեքենայական աշխատանքն ամենևին մրցակից չի կարող լինել ձեռքի տնային աշխատանքին, որ տնային ձեռքագործ իրերը շինուում, գործուում են մարդուն ապրուստ հայ-

թայթող գլխաւոր աշխատանքից ազատ ժամերում։ Որքան էլ ուժան լինին գործարանական ապրանքները, ազատ ժամերում իր ձեռքով շինածը, գործածը աւելի ուժան կընտի, որովհետև հում նիւթը մեծ մասամբ հաժարեա ոչինչ չարժէ։ Մոռացութեան է տրուում և այն, որ շատ գործերում կենդանի ձեռքը կըպահպանի իր գերազանցութիւնն ամեն տեսակ մեքենաներից։

Զանազան կատարելագործութիւններից մեծամեծ ակնկալութիւններ ունէին թէ գիւղատնտեսութեան և թէ արդիւնաբերութեան միւս գլխաւոր ճիւղերում. այդ ակնկալութիւններից մի քանիսն իրագործուեցին, և ահա այնուհետև ծալեցին մէկ կողմ դրին «փոքր, անշահաւէտ ձեռքի աշխատանքները»։

Այս և ուրիշ պատճառներից՝ շատ ժամեր, որ առաջ աշխատանքի էին նուիրուած, դարձան դատարկապորտութեան և անգործութեան ժամեր, և սրանից ուղղակի մեծ վնասներ հասան, ծախսերը բազմացան, իսկ եկամուտները նուազեցին։ Կէս դար է, որ տնայնագործութիւնն աստիճանաբար ընկնելով. նրա միքանի ճիւղերն իրենց անկման վերջին սահմանին են հասել։

Էլ չեմ խօսում, թէ ներկայում մեզ մօտ որ աստիճան ընկած է տնայնագործութիւնը, հաժեմատելով հին ժամանակների հետ, երբ, թէև տնային ձեռքի աշխատանքի արտադրութիւնը գլխաւորաբար ծառայում էր ընտանեկան օջախի հաժեստ պահանջներին, բայց և այնպէս շատ ճիւղերում հասած էր գերազոյն աստիճանի։ Տնայնագործութեան մեզ հասած հին նմուշները, խալիները, քանդակները և պէսպէս զարդարանքները, վկայում են, թէ հին ժամանակներում ընտանեկան օջախում ծաղկում էր վսեմ գեղարուեստ, թագաւորում էր կիրթ ճաշակ. գիտէին օգտուել օտար նմուշներից, չընդաւաճանելով իրենց ինքնուրոյնութեան, ազգայնութեան և գեղարուեստին։

Բայց կասեն. մի՞թէ խոշոր աջողութիւններն արդիւնաբերութեան միւս ճիւղերում չեն լրացնում այդ անկումը. օրինակ՝ գիւղատնտեսութեան առաջադիմութիւնը մի՞թէ այնքան մեծ չէ, որ մոռացութեան տրուեն այն վնասները, որ առաջացել են տնայնագործութեան անկումից։

Կարծում եմ, որ ոչ։ Այդ վնասներն այնքան նշանաւոր են, որ տնայնագործութեան անկումը պիտի համարենք իսկական ազգային մի դժբախտութիւն։

Նախ՝ իզուր կորչում է ազատ ժամանակը և զարգանում է դատարկապորտութիւնը, որ միքանի տեղերում և տարբեր որոշեալ ժամանակներում ուղղակի հասնում է զարհուրելի չափերի, իր բոլոր ցաւալի հետևանքներով. հէնց միայն այս բաւական մեծ վնաս է։

Այնուհետև, արհամարհանքը դէպի տնայնագործութիւնը թոյլ չի տալիս մատաղ սերնդին աշխատանքի նախապատրաստուելու։ Այժմ շատ է այնպիսի գիւղացիների թիւը, որոնք հազիւ թէ կարողանան իրանց համար շինել աւել, հասարակ կացին, փոցխի կոթ կամ թէ կարկատել դութանը, տափանը և այլն. իսկ աւելի շատ է միւս դասակարգերի մէջ

այնպիսիների թիւը, որոնք մինչև անգամ անկարող են լինում վարագոյրի մի հասարակ կեռ խփել պատին և դրա համար վարպետ են կանչում, մինչդեռ այդ տեսակ ամենահասարակ գործերի համար հարկաւոր է միայն վարժութիւն, ձեռքի ճարպիկութիւն։ Եւ միթէ ամօթ չէ՞, որ մեր երիտասարդ գիւղացիները իրանք իրանց ոտնամանները կարկատել անգամ չըգիտեն։

Պիտի աւելացնեմ այս բոլորի վրա և այն, որ տնային արհեստների անկումն ազդել է և ժողովրդի ճաշակի վրա։ Ցաւում է մարդ, երբ տեսնում է՝ որքան պակասել է ժողովրդի մէջ գեղեցիկ ձևերի, նաշխերի, գոյների զուգորդութեան նախկին նուրբ հասկացողութիւնը։ Հազարաւոր ընտանիքներ կորցրել են նախկին սրտաբացութիւնը, յարժարաւորութիւնը, դարձել են չոր, լերկ և անկենդան։ Մեծ մասը այն գեղարուեստական ընորոշ զարդարանքների, որոնք հնումը շքեղութիւն էին տալիս տան ներքին կահաւորութեանը, այժմ տարուած է արտասահման կամ թէ որոնւում է թանգարանների համար վերնայարկի քունջերում կամ նկուղներում։

Եւ վերջապէս տնային արհեստների անկումը սերտ կապուած է առանձին ընտանիքների և ամբողջ նահանգների բարեկեցութեան անկման հետ։ Այդ արդէն ամենամեծ վնասն ու կորուստն է, որ ծանրանում է ամբողջ երկրի վրա և առաջացնում է ցաւալի հետևանքներ։

Բարեկեցութեան այդ անկումն աւելի պարզ աչքի է ընկնում, ի հարկէ, գիւղական կեանքում, մանա-

ւանդ մանր տնտեսութիւնների մէջ, որոնք մեր ժողովրդի մեծամասնութիւնն են կազմում։

Ինչպէս յայտնի է, գիւղական ընտանիքների ահագին մեծամասնութիւնը խրած է պարտքերի մէջ։ Նրանց բարեկեցութեան անկումը թերևս որոշեալ չափով կախումն ունի պահանջների չափազանց աճումից, բայց և այնպէս համոզուած եմ, որ գլխաւոր պատճառը տնային արհեստների չքանալն է։ Այդ ասում եմ՝ հիմնուելով իմ անձնական դիտողութիւնների վրա. միջին կարողութիւն ունեցող այն գիւղական ընտանիքներում, որ ես հանդիպել եմ, տնային աշխատանքը միշտ մեծ չափով ծաղկած է եղել. այդ աշխատանքը ծառայելիս է եղել գլխաւոր երկրագործական աշխատանքին իբրև օժանդակ միջոց։

Այս վերջին տարիներում բարեբախտաբար շատ տեղերում նկատւում է ետադարձ ձգտում, որ յոյս է տալիս, թէ կըգան լաւագոյն ժամանակներ։ Նախ և առաջ կրթուած դասակարգը, որ բաւականանում էր միմիայն մտքի միակողմանի զարգացմամբ և բարձրից էր նայում հասարակ ֆիզիկական աշխատանքին, այժմ վերջապէս հասկացել է ձեռքի աշխատանքի դաստիարակչական, բարոյական, հասարակական եւ տնտեսական վեհ նշանակութիւնը։ Այդ նոր հայեացքի հետևանքն այն է, որ կառավարութիւնը և հասարակութիւնը միահամուռ ուժերով դպրոցների մէջ մտցրին ձեռքի աշխատանքներ, ձեռարուեստը [1]), բացին կանանց համար

[1]) Այդ մասին Նորվեգիային առաջին օրինակը ցոյց տուեց Դանեմարկան, որտեղ ձեռարուեստը, այսինքն՝ սլոյդը՝ վաղուց

արհեստաւորաց դասընթացներ, կազմեցին տնայնագործական արհեստները խրախուսող «միութիւններ»։ Այդ միութիւնները բացին ձեռարուեստի ժողովրդական դպրոցներ, զանազան արհեստաւորաց դասընթացներ, երեխաների համար աշխատանքի ապաստարաններ, տնայնագործական ապրանքները վաճառելու համար խանութներ։

Ահա այն բոլորը, ինչոր արուած է առայժմ արդիւնաբերութեան այդ կարևոր ճիւղի համար։ Թէև առաջին հայեացքից այդ կարող է մեծ առաջադիմութիւն թուալ, բայց իսկապէս շատ բան չէ 2½ միլիոն աղգաբնակութեան համար, որից մօտ մէկ միլիոնը ցրուած է ընդարձակ, միմեանցից հեռաւոր տարածութիւնների վրա։ Յեղաշրջել նորից միանգամից մի ամբողջ ժողովրդի կենցաղն և հայեացքը աշխատանքի վրա՝ մի հսկայական գործ է, որի իրագործման համար հարկաւոր են շատ ժամանակ և եռանդ։

Եւ այստեղ էլ, ինչպէս միշտ և ամեն տեղ, ուր աչքի առաջ ունենք ժողովրդի բարիքը, պիտի ընդունենք, որ նպատակի հասնելու համար անհրաժեշտ է սկսել մանուկներից և պուտանիներից. ժողովրդի և երկրի ապագան նրանց մէջ է։ Ինքն ըստինքեան էլ հասկանալի է, որ գլխաւոր և առաջին պարտականութիւնը ընկնում է ծնողների վրա։

Բայց հէնց այստեղ էլ արգելք է հանդիսանում

մուծած է դպրոցական ծրագիրների մէջ, իբրև կրթական-դաստիարակչական առարկայ։

այն հանգամանքը, որ ծնողներն և ընտանիքի միւս չափահաս անդամները իրենք չեն զբաղւում այն տեսակ ձեռքի աշխատանքներով, որոնց մասին է այստեղ մեր խօսքը, ուստի և չեն կարողանում հարկաւոր օրինակը ցոյց տալ երեխաներին։ Բայց և այնպէս կարելի է շատ բան անել, եթէ ծնողները լրջութեամբ ըմբռնեն գործի էութիւնը և դրդեն ու խրախուսեն իրենց զաւակներին՝ ազատ ժամերին զբաղւելու ձեռքի աշխատանքով։

Երկու սեռի երեխաներն ու պատանիներն ևս պիտի վարժւեն ձեռքի աշխատանքի մէջ թէ դպրոց մտնելուց առաջ, թէ դպրոցում՝ ուսման ժամանակ և թէ դպրոցական կրթութիւնը վերջացնելուց յետոյ։

Մինչև 7 տարեկան հասակն կարելի է արդեօք երեխաներին ձեռքի աշխատանքով զբաղեցնել։—Ո՛չ միայն կարելի է, այլև հարկաւոր է. որովհետև նրանց ուժերից վեր չէ կատարել ֆիզիքական ձեռքի աշխատանք։ Ասուած է «ճիւղը մատաղ ժամանակ կը ճկեն», և երեխաներին էլ վաղ պիտի ընտելացնել կանոնաւոր զբաղմունքների, թէ նրանց մէջ աշխատանքների ընդունակութիւնները զարգացնելու և մարզելու և թէ նրանց ձանձրոյթից ազատելու համար։ Ձանձրոյթն ամենաՇնասակար «զբաղմունքն» է։ Արդէն ծնողների և դաստիարակների գործն է գտնել երեխաների ուժերին համապատասխան յարմար աշխատանքներ, պատշաճաւոր կերպով նրանց կարգաւորել-դասաւորել, մատակարարել աշխատանքի համար հարկաւոր պիտոյքներ։ Երեխաներին պիտի հասկացնել, որ այդ գործը ոչ թէ

«ժամանակ անցկացնելու» համար է, այլ մի օգտակար և ուշադրութեան արժանի աշխատանք է։

Մեծ և փոքր երեխաներին համապատասխան յարմար աշխատանք տալու խնդիրը, ի հարկէ, տարբեր է լուծւում քաղաքի կեանքում և տարբեր գիւղական շրջանում։

Քաղաքի կեանքի պայմաններն այդ խնդրի լուծումն աւելի դժւարացնում են։ Քաղաքացի, մանաւանդ բանւոր դասակարգի՝ ծնողների համար դժւար է զբաղեցնել թէ փոքր երեխաներին և թէ միևնոյն ժամանակ յարմար զբաղմունքներ տալ դեռահասներին, որոնք փոխանցական հասակում են։ Այդ տեսակ դեռահաս պատանիները սովորում են իրենց ազատ ժամանակի մեծ մասն անցնել բոլորովին պարապ, որով նրանց ժամանակ անցկացնելը պատշաճաւորութեան և բարեկրթութեան սահմանից դէն է անցնում։ Եւ ահա այստեղ հասարակութիւնն և ընտանիք մեծ գործ ունեն կատարելու։

Ընտանիքների մէջ պէտք է մտցնել ձեռքի աշխատանք, և հասարակութիւնը պիտի նպաստի այդ գործին, նա պիտի հիմնի երեխաների համար աշխատանոցի ապաստարաններ և զանազան արհեստագիտական դպրոցներ։

Գիւղում երեխաների համար անհամեմատ աւելի շատ տեսակի աշխատանքներ կան, քան թէ քաղաքում, և աշխատանքի ընդունակ երեխաների համար կայ ընդարձակ ասպարէզ. այդ պատճառով աշխատանքի գործադրութիւնն երբեմն չափազանցութեան է հասնում,

երեխաները աշխատում են հաւասար հասակաւոր մարդոց։ Այդպիսի հանգամանքներում ինքնասէր երեխաները կարող են իրանց վնասել։ Եւ չըպէտք է մոռանալ, որ ամեն տեսակ աշխատանք հաւասարապէս օգտակար չէ երեխայի համար, նա կարիք ունի զարգանալու և ֆիզիքապէս, և հոգեպէս, վերջապէս զարգանալու բազմակողմանի։ Շատ օգտակար է երեխային ստիպել այս և այն կողմը վազվզել, կատարել զանազան յանձնարարութիւններ. այդ զարգացնում է նրա մէջ արագաշարժութիւն, աչքաբացութիւն, շրջանկատութիւն, իր միտքը բացատրելու կարողութիւն։ Օգտակար է նոյնպէս երեխաներին մասնակից անել տան և տնտեսութեան վերաբերեալ գործերին, իբրև օգնական հասակաւորներին. այդ տեսակ գործերն երեխայի մարմինն ամրապնդում և նրան աշխատանքի յարմարաւոր են դարձնում։ Բայց այդ տեսակ աշխատանքների մէջ այնպիսիները, որոնք մտքի գործունէութեան հետ չափազանց սակաւ առնչութիւն ունեն, նրանք կատարւում են մեքենայաբար, և եթէ այդտեսակ աշխատանքները գերիշխող լինեն մանկան կեանքի մէջ, նրա վրա բացասական ազդեցութիւն կունենան։ Չափազանց մեքենայական աշխատանքը մանկանը թէ հաճոյք չի պատճառում և թէ չափազանց քիչ նշանակութիւն ունի իբրև դաստիարակչական և կրթական միջոց, որովհետև միաժամանակ չի նպաստում նրա ֆիզիքական և հոգեկան ընդունակութիւնների զարգացման, չի պատրաստում երեխային ժիր և ընդունակ մարդ դուրս գալու։

Եթէ պատահում է որ հասարակ անուս բանւորը

խէթ-խէթ և մինչև անգամ նախանձոտ ատելութեամբ է նայում մտքի աշխատանքի ներկայացուցչի վրա, հաժարելով նրան ձրիակեր, այդ տեսակ վերաբերմունքի պատճառը, անկասկած, այն է, որ բանուորին չեն սովորեցրել իր աշխատանքի մէջ միտք և հոգի մտցնելու, այլ թոյլ են տուել որ նրա մէջ զարգանայ միայն կոշտ ֆիզիքական ոյժը։ Եթէ երեխաներին մանկութիւնից ուսուցանեն այնպիսի ձեռքի աշխատանք, որ նրանց մէջ զարգացնի ոչ միայն ֆիզիքական ոյժ և ճարպկութիւն, այլ և՛ միտք, և՛ ճաշակ, այդ բանը կազատի նրանց նեղ հայեացքներից, իսկ այդ էլ, միւս կողմից, կընպաստի դասակարգերի մէջ աւելի լաւ յարաբերութիւնների հաստատուելուն, փոխադարձ հասկանալուն և յարգելուն։

Փորձից գիտեմ, կան ծնողներ, որոնք նիւթական հաշիւներից ելդուած՝ երբեմն ժանկան աշխատանքն իշարն են գործդնում.նախազգուշացնում եմ այդ բանից։Իհարկէ, պատահում է, որ հանգամանքներն են ստիպում երեխայի աշխատանքի օգնութեանը դիմել, բայց յամենայն դէպս, կարելի է և անհրաժեշտ է, իշարը գործ չընդնել այդ.ում համար որ երեխաների ապագան թանգ է, նա մի կերպ հնար կըգտնի անցողական կարիքներից գլուխ հանելու, որպէսզի ընդմիշտ չըվտանգի զաւակների ապագան։

Այն աշխատանքների շարքում, որոնք բացի ֆիզիքական ճարպիկութիւնից՝ երեխաների մէջ զարգացնում են միտք և երևակայութիւն ու միևնոյն ժամանակ նրանց հաճոյք են պատճառում՝ առաջին տեղը բռնում է սլոյդը—ձեռարուեստը, այդ խօսքի ամենաընդարձակ նշանակութեամբ։

Դաստիարակչական և կրթական նպատակով շատ օգտակար են նոյնպէս մի քանի աշխատանքներ պարտէզում, բանջարանոցում և բակում. սրանք շատ սովորական են գիւղական կեանքում։ Այդտեղ թէ ձեռքի թէ մտքի համար շատ աշխատանքներ կան, օրինակ՝ պարտէզը հարթել և շաւիղներ բանալ, ցանել, տնկել, հոգս ու խնամք տանել։

Այդպէս ուրեմն երեխաներին կարելի է աշխատանքի ընտելացնել աւելի վաղ հասակից, քան թէ շատերը կարծում են։ Ձեռքի և մտքի օժանդակութիւն պահանջող աշխատանքը հարկաւոր է շարունակել և այն ժամանակ, երբ երեխաները կըմեծանան։ Այսպէս վերաբերելով ձեռքի աշխատանքին՝ անհամեմատ մեծ օգուտ կըբերենք թէ առանձին մարդոց և թէ բոլոր հասարակութեանը։

Բայց կրկնում եմ թէ աշխատանքները և թէ գործիքները խիստ համապատասխան պիտի լինին երեխաների հասակին և զարգացման։

Մի կողմ թողնելով զուտ երեխայական այն աշխատանքները, որոնք իրանց բնաւորութեամբ մոտենում են աւելի խաղի, օրինակ՝ թղթից ձևեր կտրատել, կպցնել, ներկել և այլն, իւրաքանչիւր ընտանիքում կըգտնուեն բազմաթիւ մանր աշխատանքներ, սկսած տաշեղներ ճղճղելուց մինչև ընտանեկան առօրեայ կեանքում գործածական զանազան փոքր ու մեծ առարկաներ նորոգելը, կարկատելը և շինելը։

Երեխաներին առիթներ պիտի տալ օգտուելու աշխատանքի համար պահանջուած գործիքներից, ոչ թէ

գործիքներն փականքի տակ դնել և թաքցնել, ինչպէս յաճախ անում են այն անհիմն պատճառաբանութեամբ՝ թէ «երեխաները փչացնում և կորցնում են»։ Ծնողների պարտաւորութիւնն է երեխաներին ընտելացնել կարգ ու կանոնի և ճշտութեան. նրանք պիտի հսկեն, որ երեխաները խնամքով պահպանեն, ժողովեն և իրանց տեղը դնեն այդ գործիքները, երբ այլևս պէտք չեն. իսկ ասենք թէ այս կամ այն գործիքը կորցրին կամ փչացրին, ինչ փոյթ, երեխաների ապագան աւելի թանգ է, քան թէ որ և է բուրգու, դուր կամ այդպիսի մի ուրիշ գործիք։

Կան այնպիսի ծնողներ էլ, որոնք ուղղակի արգելում են երեխաներին այդ տեսակ աշխատանքով զբաղուելու երկիւղ կրելով, չլինի թէ նրանք ձեռքը, ոտքը կամ մի որև է տեղը կտրեն-վնասեն։ Այնքան էլ մի մեծ դժբախտութիւն չէ, եթէ մէկ-երկու անգամ՝ պատահի ձեռքը կամ ոտքը վնասեն (իհարկէ ոչ սաստիկ), այնուհետև կըսովորեն զգոյշ լինել։

Եթէ աղջկանց կրթելու լինենք ընդունուած սովորական ձևերով, սկզբում կարիք չի լինի նրանց համար առանձին գործիքներ և նիւթեր ձեռք բերելու. բաւական է, եթէ նրանք ունենան կարելու և գործելու ասեղներ, մատնոց, թել, մկրատ, լաթի և գործուածների կտորտանք։ Աւելի ուշ նրանց համար հարկաւոր կըլինեն թանգագին և բարդ գործիքներ, ինչպէս են՝ կարեմեքենայ, գործելու և ոստայնանկութեան քարգայ և այլն, սկզբում փոքր դիրքով, իսկ յետոյ աւելի մեծ։

Աւելի հասակաւոր աղջիկները տնային սովորական

գործերում մասնակցելու համար, այն է՝ կերակուր պատրաստելու և տունը հաւաքելու և այլն, ոչ մի առանձին գործիքի պէտք չունեն, իսկ փոքրահասակների համար յարմար են աւելի փոքր գործիքներ, քանթէ ընտանիքում գործածւում են։

Եթէ միջոցները ներում են, լաւ կըլինի, եթէ նրանք ունենան առանձին փոքր հնոց իր պարագաներովը, որի վրա կարելի լինի իսկական կերակուրներ պատրաստել. իսկ եթէ միջոցները չեն ներում, պէտք է թոյլ տալ, որ նրանք կերակուր պատրաստեն սովորական հնոցի վրա, և ամենևին չվրդովուել, թէ կըթափթփեն, կըկեղտոտեն. միայն աչքի առաջ ունենալով, որ ամեն տեսակ գործ զարգացնում է երեխաների աշխատելու ընդունակութիւնները։

Բացի դրանից՝ մայրերը պիտի հսկեն իրանց աղջկանց դպրոցական գործնական պարապմունքների վրա՝ ընտանեկան վարժութեամբ դպրոցում նրանց ուսածը աւելի ամրապնդելու և զարգացնելու։ Մայրերի այդ տեսակ վարմունքը կըստիպի աղջկանց աւելի շատ ու աւելի լաւ հասկանալու, թէ այն, ինչ որ իրանք սովորում են, մի կարևոր և օգտակար բան է կեանքի համար։

Վերջին ժամանակներս սկսել են աղջկանց սովորեցնել և այնտեսակ արհեստներ, որոնք առաջ վերապահուած էին միայն տղաներին, օրինակ՝ կօշկակարութիւն, կազմարարութիւն, զամբիւղագործութիւն, փայտի փորագրութիւն, խաղալիքներ շինել և այլն։

Ամեն մի ջանք կանանց աշխատանքի շրջանակն ընդլայնելու, իհարկէ աչքից բաց չթողնելով նրանց

ֆիզիքական ուժերը ուրախութեամբ պիտի ողջունենք։

Սլոյդով պարապելու սկզբնական գործիքները բաւականին պարզ և աժան են. հարկաւոր են՝ դանակ, մուրճ, աքցան, սղոց, բուրղու, խարտոց, դուր, ռանդա։ Ցանկալի է որ հետզհետէ այդ գործիքների թիւն աւելացուն և ուրիշ գործիքներ՝ մանաւանդ ատաղձագործութեան վերաբերեալ, ճախարակ և այլն։ Շատ ցանկալի է նոյնպէս, որ այդ տեսակ աշխատանքների համար յատկացրած լինի առանձին սենեակ, բայց այնտեղ, ուր հանգամանքները թոյլ չեն տալիս, կարելի է զբաղուել և սովորական սենեակում. այդ պարագայում մեծ գործնական յարմարութիւն ունի սլոյդի ուսուցիչ Տեօննեսէնի հնարած դաղգեահը, որը հարկաւոր դէպքում արագ կարելի է դարձնել գրասեղան կամ սովորական սեղան։

Շատ օգտակար է որ տղաները զբաղուեն և դարբնութեամբ։ Փայտէ պարագաներ շինելու ժամանակ հարկ է լինում գործ ունենալ և մետաղի հետ. ուստի անհրաժեշտ է հաւասար չափով ուշադրութիւն դարձնել և դրա վրա, որ նոյնպէս հետաքրքիր և օգտակար գործ է։ Կարճ ժամանակամիջոցում յաջողւում է լաւ հետեանքի հասնել։ Որ և է սեխ կռել և պատրաստել մի դժուար գործ չէ։

Վնասակար չէ վարժեցնել և ստուարաթղթից իրեր պատրաստելու, մի բան, որը մանաւանդ օգտակար է քաղաքում ապրող փոքր երեխաների համար։ Այդ աշխատանքների նիւթերը և գործիքները շատ հասարակ և պարզ են, և եթէ աշխատանքները ղեկավարուում են խալացի կերպով, մատները իւրացնում են ճարպիկութիւն և ժաքրասիրութիւն։

Վատ չէ, եթէ երեխաներին թոյլ տրուի և ջրաներկերով ու իւղաներկերով նախշելու։ Եթէ երեխային առաջնորդեն, նա շուտ կըմբռնի ներկեր բանալու և խառնելու գաղտնիքը, կըսովորի նրանց գործադրել։ Տնային զանազան հասարակ առարկաների ներկելը հէնց առաջին անգամից մեծ հրճւանք է պատճառում փոքրիկ նաշխարարին. այդ տեսակ աշխատանքը ժամանակով նրա մէջ կը զարգացնի ներկերի հասկացողութիւն և ճաշակ։

Պարտէզում և բանջարանոցում աշխատելու համար լաւ կըլինի, եթէ երեխաներն ունենան իրանց ուժերին յարմար թեթև գործիքներ՝ փոցխեր, թիակներ, ձեռքի սայլակներ և այլն։ Անձնական փորձով գիտեմ, այդ միջոցով՝ սակաւ ուժ գործադրելով՝ մեծ արդիւնք է ստացւում։ Այդ տեսակ աշխատանքն աւելորդ տեղը չի յոգնեցնում երեխային, այլ ընդհակառակը՝ ուրախացնում է և նրա մէջ զարգացնում հոգեկան կորով։

Ամեն կերպ պիտի ջանալ ընտանիքների մէջ մրցընել և արժատացնել ձեռքի աշխատանքը։ Մեծ է նրա նշանակութիւնը տնտեսական, արտադրական-կրթական, ֆիզիքական և մտաւոր կողմից։ Մանուկ հասակից ձեռքի արհեստներ սովորած սերունդը՝ մեծանալով կըլինի աւելի ուժեղ, ճարտար, ժիր, աչքաբաց, ճշտապահ, համբերող, աշխատասէր և բարոյա-

կան. նա աւելի սերտ կապած կըլինի ընտանեկան օջախի հետ և կունենայ աւելի կիրթ ճաշակ: Նա խօսելու, դատելու, օգտակար ժամանակ անցկացնելու նիւթ կունենայ, և ոչ թէ դատարկապորտութիւնից ստիպւած կըզբաղի քաղաքի կամ գիւղի բամբասանքներով:

Մատաղ սերունդն իր աշխատանքով նպաստելով ընտանեկան օջախի բարեկեցութեան և գրաւչութեան, անկասկած՝ ինքն ևս աւելի սերտ կը կապի այդ օջախի հետ: Ընտանիքի անդամների միահամուռ մասնակցութիւնն ընտանեկան օջախը շէն պահելու գործին աւելի սերտ կապով կը միացնի նրանց միմեանց հետ. դրա հետևանքը կըլինի առհասարակ սէր դէպի ընտանիքը և դէպի հայրենիքը:

Տնայնագործութեան կարևոր նշանակութիւնը հաստատում են և վիճակագրական տեղեկութիւնները: Նրանցից կարող ենք եզրակացնել, որ այդ տեսակ աշխատանքի զարգացման և առաջադիմութեան հետ սերտ կապւած է առանձին ընտանիքների և ամբողջ համայնքների բարեկեցութեան աճումը:

Չըկարծէք թէ խօսքս մի աննշան խնդրի մասին է: Ո՛չ: Երեխայի աշխատանքն ևս կարող է նշանաւոր արդիւնք առաջ բերել: Ես անձամբ ճանաչում եմ մի պատանու, որ 13 տարեկան հասակից սկսած իր ազատ ժամերին պատրաստում էր զանազան գեղեցիկ առարկաներ և դրանով տարեկան վաստակում էր 400 կրօն (200 ր.): Ճանաչում եմ և հասակաւոր գիւղացիների, որոնք դաշտային և այլ գիւղատնտեսական գործերից

ազատ ժամերում տնայնագործութեան աշխատանքով վաստակում են աւելորդ 300—600 կրօն (150—300 ր.): Այն ընտանիքներում, որոնց թէ մեծ և թէ փոքր անդամները գիտեն այդ ձևով օգտւել իրանց ազատ ժամերից, ընտանիքի եկամուտները նշանաւոր չափով աճում են:

Այն նահանգներում, ուր հողն անբերրեր է, կըլիման խիստ և ձմեռայ երեկոները երկար, ուր երկրագործական աշխատանքները համարեա կէս տարի կանգ են առնում, այնտեղ գիւղական կեանքում տնային ձեռքի աշխատանքը կարող է և պէտք է ունենայ ընդարձակ գործադրութիւն:

Որքան հնարաւոր է սակաւ պետք է ունենալ ուրիշի աշխատանք, քան կարելոյն կառավարել իր սեփական ուժերով. այս խօսքերը նշանաբան պիտի լինեն իւրաքանչիւր գիւղացու համար:

Բայց ինձ կարող են առարկել, թէ աւելի լաւ չի՞ լինի հիւսնութեան, ատաղձագործութեան, դարբնութեան աշխատանքները թողնել մասնագէտ արհեստաւորներին, իսկ գիւղացին հմուտ մասնագէտ դառնայ միայն իր գործում, երկրագործութեան մէջ:

Այդպէս են վարւել մինչև այժմ, և ահա հատուցումը էլ ստացան: Փորձը ցոյց տուեց՝ սակաւահող գիւղացիները, որ մեր գիւղացիութեան ահագին մեծամասնութիւնն են կազմում, շատ սուղ նիւթական միջոց ունեն. նրանք չեն կարողանում գնել տնային առօրեայ կարիքների համար զանազան առարկաներ և գիւղատնտեսական գործիքներ, իսկ օտարերկրեայ ապ-

ղանքներ ձեռք բերելու մասին ինչ խօսք կարող է լինել։

Աշխատանքի բաժանումը միւս դասակարգերի համար մեծ առաւելութիւններ ունի, իսկ գիւղացիների համար ընդհակառակը՝ վնասակար է։ Անհրաժեշտ է, որ գիւղացին ինքն լինի և՛ հիւսն, և՛ ատաղձագործ, և դարբին, և՛ ներկարար և այլն, որպէսզի մոլորուած ու շւարած չլինայ, երբ կոտրւեն կամ փչանան գնած գործիքները, մանաւանդ երբ գրպանը դատարկ է։ Եւ վերջապէս վատ չի լինի տնտեսել միքանի աւելորդ կոպէկ։ Իսկական տնայնագործական աշխատանքը կօգնի նրան վաստակել աւելորդ կոպէկներ։ Սակաւահող գիւղացին զբաղւելով տնայնագործական աշխատանքով, աւելի շուտով կարող է իր նիւթական վիճակը բարելաւել, ետ ձգել մի գումար, միևնոյն ժամանակ չընհեռանալ իր տուն ու տեղից, ինչպէս այդ լինում է, երբ ձմեռը նա հարկադրւած գնում է գործարան կամ դրսի մի որ և է աշխատանքի։

Բայց բոլոր դասակարգերի համար ևս արդեօք կարևոր է ձեռքի աշխատանքը։

Ձեռքի աշխատանք սովորելն ունի՞ արդեօք էական նշանակութիւն և նրանց համար, որոնք իրանց ապրուստը պիտի հայթայթեն մտաւոր աշխատանքով։

Այդ հարցումների պատասխանն ըստ ինքեան հետևում է վերև յիշածից։ Մարդս ինչ վիճակում որ էլ լինի, աշխատանքը նրա համար պէտքական եւ կարեւոր է։

Ձեռքի աշխատանքը նախ՝ իւր ֆիզիքական կողմով մտաւոր յոգնածութեան հակակշիռ է. զուտ մտաւոր աշխատանքից յետոյ ձեռքի աշխատանքով զբաղւելը մարդուս հանգստացնում և թարմացնում է։

Երկրորդ՝ արհեստների զանազան ճիւղերում վարժութեամբ ձեռք բերած ֆիզիքական ճարտարութիւնը, ճշտութիւնը և գործնականութիւնը ոչ մի վիճակի համար աւելորդ չեն կարող լինել։

Վերջապէս՝ ձեռքի աշխատանքի տնտեսական կողմն ամեն վիճակի մարդոց համար ևս ունի նշանակութիւն։ Մտաւոր աշխատանքով զբաղւողներից շատ յաճախ գանգատներ են լսւում, թէ կեանքն օրէցօր թանգանում է, ապրուստը դժւարանում, և՝ եթէ իրանց չեն զրկում յարմարութիւններից և հաճելի հանգստութիւնից իրանց ապրուստը հայթայթող աշխատանքից յետոյ, չափազանց դժւարանում են ծայրը ծայրին հասցնել։ Ահա տնային ձեռքի աշխատանքը կարող է այս կարգի մարդոց կեանքը թեթևացնել ու քաղցրացնել, ազատելով աւելորդ ծախսերից, եօլա գնալ իրանց սեփական միջոցներով, միևնոյն ժամանակ նրանց հաճելի և օգտակար զւարճութիւն պատճառել։

Այսպէս ուրեմն մեր ժամանակի ամենածանրակշիռ խնդիրն է ընտանիքի մէջ մտցնել և արմատացնել ձեռքի արհեստները կամ տնայնագործութիւնը։ Նրա նպատակն է դաստիարակել ֆիզիքապէս և մտաւորապէս զարգացած սերունդ, որ հաւասարապէս ընդունակ լինի թէ ֆիզիքական և թէ մտաւոր առաջադիմութեան։ Ձեռքի աշխատանքին հարկաւոր է վերա-

դարձնել իր նախկին պատուաւոր տեղը և ազնիւ կերպարանքը։

Ուսուցիչը և ընտանիքն իրանց վրա պիտի վերցնեն այդ խնդրի իրագործումը։ Ուսուցիչը միշտ կըկաղայ, մինչև որ նրա ծրագրի մէջ չեն մըտցըրել ձեռքի աշխատանքն իր զանազան տեսակներով, իբրև պարտաւորեցուցիչ ուսանելի առարկայ։ Ուսուցնարանի գործն է խրախուսել և քաջալերել ընտանիքը, իսկ ընտանիքի գործն է ուսուցիչարանի սկսածը պաշտպանել։

Ընտանիքները դեռ ևս սակաւ են հասկանում այդ կարևոր խնդրի նշանակութիւնը և սակաւ են հետաքրքրուում դրանով։ Անշարժութիւնը դեռ մեծ է. դատարկապորտութիւնը սովորութիւն է դարձել, իսկ նորամուծութեան ձգտումը մեծ մասամբ միայն խօսքերով է արտայայտուում։ Հասարակութեան առաջադէմ դասի ծնողները թող ամեն ջանք գործ դնեն, որպէս զի ուսուցիչարանը շուտով օգնութեան հասնի միջին կարգի ընտանիքին, և ուսուցիչարանն էլ թող համոզի բոլոր ծնողներին, որ նոր սերունդը չըպիտի կրկնի հնի սըխալները. որդիքը պարտաւոր են հայրերից աւելի լաւ լինել։

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА
Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
С.Р.Ա.Կ. 7/II.1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Լույս տեսան «Հասկերի»

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

I Երեխայի կրթութիւնը մինչև 6-տարեկան հասակը— Հենրիկ Վերնիցի թարգմ. Ստ. Լիսիցեանի 25 կ.։

II Երեխայի քունը—Վիրենիուսի, թարգմ. Ստ. Լիսիցեանի։ . . . . . 15 կ.

III Երեխայի ազատութիւնը, Կ. Հ. Վենացելի,—Մեծերն ու փոքրերը—տիկ. Իսահակէնի, թարգմ. Ստ. Լիսիցեանի։ . . . 15 կ.

IV Սովորութիւնները, նրանց նշանակութիւնը ու կըրթութիւնը—Կ. Ենիցկու, թարգմ. Մ. Աղ. և Ստ. Լ. . . . . 15 կ.

V Պարգևներն ու պատիժները ընտանեկան դաստիարակութեան մէջ—Ֆեսենկոյ, թարգմ. Մ. 15 կ.

VI Ո՞րտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղբայրը — Գալանդաուէրի, թարգմ. տ. Հ. Թոփչեանի։ Ծանօթացրէք կեանքի ծագման հետ—Տիկ. Սելմերի, թարգմ. Ստ. Լ. . . . . 15 կ.

VII Ընտան. դաստիարակութեան նպատակները և հիմունք.—Գ. Կապտերևի, թարգմ. Միս. Աս. 15 կ.

VIII Ինչն է հետաքրքրում և զարգացնում մանկան—Ակսել Արստալ թարգ. Ստ. Լիսիցեանի 15 կ.

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Ճանապարհածախսը՝ 1 ռ. ոչ պակաս գնողների համար խմբագրութեան վրա է Тифлисъ, Редакція «Аскеръ».

ՀՀ Ազգային գրադարան
NL0229453

47. 914